



Հավելված թիվ 5

«ՀԱՍՏՍՏԱՆԻ ԲԱՆԿ»

«YSP-Հայաստանի Բանկ» ՓԲԸ Խորհրդի որոշմամբ  
«20» ապրիլի 2011թ. - թիվ 4 Արձանագրություն  
Խորհրդի նիստին նախագահող

Դերգունովա Օ.Կ.

«YSP - Հայաստանի Բանկ» ՓԲԸ Խորհրդին

«YSP - Հայաստանի Բանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի վարչության եզրակացությունը  
2010թ-ի ընթացքում «YSP - Հայաստանի Բանկ» ՓԲԸ ներքին հսկողության համակարգի ՀՀ կենտրոնական բանկի  
կողմից սահմանված ներքին հսկողության նվազագույն պահանջներին համապատասխանության վերաբերյալ

«YSP - Հայաստանի Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Ներքին աուդիտի վարչության կողմից 2010թ-ի ընթացքում և  
31.12.2010թ-ի դրությամբ իրականացվել են Բանկի ներքին հսկողության համակարգի ՀՀ կենտրոնական բանկի  
կողմից սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության գնահատմանն ուղղված ստուգումներ:

Ստուգումներն իրականացվել են մեր կողմից, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների: Մենք համոզված  
ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը կարող է հիմք հանդիսանալ Բանկի ներքին հսկողության համակարգի  
ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության վերաբերյալ  
եզրակացության համար:

- Բանկի ներքին հսկողության համակարգի ստուգումները ներառել են, բայց չեն սահմանափակվել.
- Բանկի նորմատիվային բազայի բավարարության և գործող օրենսդրության պահանջներին վերջինիս համապատասխանության գնահատումը,
  - Բանկի ղեկավարների և աշխատակիցների իրավասությունների փոխանցման և կառուցվածքային ստորաբաժանումների միջև իրավասությունների բաշխման համակարգերի վերլուծությունը,
  - գործարքների իրականացման և հաշվետվությունների ծևավորման ընթացքում Բանկում/մասնաճյուղում հսկողության և ռիսկերի գնահատման համակարգերի առկայության և համարժեքության, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի ապահովության գնահատումը,
  - Բանկի ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգի ուսումնասիրությունը,
  - Բանկի ստորաբաժանումների կողմից, Ներքին աուդիտի վարչության ստուգումների արդյունքներով արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների բավարարության վերլուծությունը և ստուգումը,
  - ՀՀ կենտրոնական բանկի և այլ իրավասու մարմինների կողմից Բանկում իրականացված ստուգումների արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև, արձանագրված թերությունների վերացմանն ուղղված Բանկի ստորաբաժանումների կողմից իրականացվող միջոցառումների ստուգումը:

2010թ-ի ընթացքում Բանկի ներքին հսկողության համակարգում (մասնավորապես, կառավարման համակարգում, ստորաբաժանումների ֆունկցիոնալ կանոնակարգերում, վարկավորման գործընթացում, հաշվառման համակարգում) Արտաքին աուդիտի, ՀՀ կենտրոնական բանկի և Ներքին աուդիտի վարչության կողմից հայտնաբերված ներքին հսկողության նվազագույն պահանջներին անհամապատասխանությունները անհրաժեշտ միջոցառումների արդյունքում վերացվել են կամ գտնվում են կարգավորման փուլում:

Մեր կարծիքով, 31.12.2010թ-ի դրությամբ Բանկի ներքին հսկողության համակարգը ընդհանուր առմամբ համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության նվազագույն պահանջներին:

«YSP - Հայաստանի Բանկ» ՓԲԸ  
Ներքին աուդիտի վարչություն  
ք. Երևան  
21 փետրվարի 2011թ.  
Հավանություն է տրվել  
«YSP - Հայաստանի Բանկ» ՓԲԸ Խորհրդին կից  
Աուդիտի կոմիտեի 28.02.2011թ-ի նիստում